Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՐՄԱՆԱՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ ԱՌԻԹՈՎ

(18 սեպտեմբերի, 2014 թ.)

Գերմանահայկական ընկերության հարյուրամյակին նվիրված ակադեմիական սիմպոզիումի մեծարգո մասնակիցներ.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր սերն ու օրհնությունն ենք բերում հայ-գերմանական բարեկամությանը կարեւոր նպաստ բերած Գերմանահայկական ընկերության հոբելյանի փոնախմբման առիթով: Ուրախությամբ ու գոհունակությամբ ենք արձանագրում եղբայրական այդ ջերմ հարաբերությունների դարակազմիկ փարեղարձը: Եւ միաժամանակ անդրադառնում ենք, որ հարյուրամյա վաղեմության ու պատմության խորքից դրանք համագործակցության ու եղբայրական վստահության նորանոր հորիզոններ են բացում երկու ժողովուրդների գիտամշակութային կյանքում:

Հայ-գերմանական բարեկամական հարաբերություններն իրենց սկզբնավորմամբ ունեցան դառը փորձության ու քննության ժամանակաշրջան, երբ նշանավոր դոկտ. Յոհաննես Լեփսիուսի կողմից 1914 թ. Գերմանահայկական ընկերության հիմնադրումից ընդամենը մի քանի ամիս անց մարդկությանը ցնցեց հայ ժողովրդի տեղահանության ու զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության լուրը: Այն պահին, երբ միջազգային քաղաքական հանրությունը լռում էր, երբ նույնիսկ գերմանական քաղաքական վերնախավում գիտակցված անտարբերության էր մատնվել հայերի ցեղասպանության փաստը, դոկտ. Յոհաննես Լեփսիուսն իր անձնական օրինակով ցույց տվեց քրիստոնեական ու մարդասիրական վերաբերմունքի բարձրագույն օրինակը: Չափազանցություն չի թվա թերեւս, եթե նշենք, որ Յոհաննես Լեփսիուսով սկիզբ առավ այն մեծ հայասերների շարքը, ովքեր ցեղասպանությանը հաջորդած տարիներին հայ ժողովրդին ցուցաբերած անմնացորդ ու անշահախնդիր օգնության համար արժանացան հայ ժողովրդի անկեղծ սիրուն եւ համակրանքին:

Հայ-գերմանական բարեկամության առատ հունքը հատկապես զգալի դարձավ ԺԹ. դարավերջին եւ Ի. դարասկզբին, երբ տասնյակ հայ երիտասարդ հոգեւորականներ ու գիտնականներ, իրենց մասնագիտական կրթությունն ստանալով գերմանական առաջատար համալսարաններում եւ գիտական կենտ-

րոններում, Սուրբ Էջմիածնում եւ Հայաստանի գիտական այլ կենտրոններում նոր բարձունքի հասցրին հայագիտությունն ու հայերենագիտությունը: Գիտամշակութային այս ծաղկուն համագործակցությունը հաստատուն հիմքերի վրա դրեց հայ-գերմանական բարեկամությունը, որի ջերմ ու եղբայրական շնչի ներքո այստեղ հավաքված եք դուք, սիմպոզիումի սիրելի՛ մասնակիցներ: Գերմանահայկական այդ համագործակցությանը նոր թափ հաղորդեցին հայ մեծանուն եկեղեցականներ ու հայագետներ Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանը, Գարեգին Ա. Հովսեփյանց Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Արշակ վրդ. Տեր-Միքելյանը, Կոմիտաս Վարդապետը եւ շատ ու շատ ուրիշներ: Նոր ժամանակներում Մենք հատկապես խոր ցավով ու անկեղծ գնահատանքով ենք հիշում գերմանահայկական բարեկամության նվիրյալ հայագետ, ասպվածաբան Հ. Հոլցին, որի անժամանակ մահը մեծ ցավ ու տրտմություն պատճառեց ամենքիս: Նրա ու գերմանահայկական բարեկամության մնացած բոլոր նվիրյալների անունները պիտի հավերժորեն գրանցվեն հայ եւ գերմանացի ժողովուրդների պատմության ամենալուսավոր էջերում:

Սիրելի՛ ներկաներ ու հրավիրյալներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր մաղթանքն ու աղոթքն է, որ Ամենակալ Տերն իր իմաստության ու շնորհի հովանու ներքո պահի Ձեզ՝ գիտության ու մշակույթի նվիրյալներիդ, պարգեւի խաղաղ ու ստեղծագործ ընթացք Գերմանահայկական ընկերության ապագա բոլոր ձեռնարկումներին ու ծրագրերին: Թող Ձեր տեսլականներն ու ազնիվ մտահղացումները հիմնվեն հավատի, սիրո ու նվիրումի անսասան հիմքի վրա, ինչպես աղոթում է սաղմոսերգուն. «Եթէ Տէրը տունը չշինի, իզուր են չարչարւում այն շինողները» (Սղմ. ՃԻԶ. 1): Աստծո սերն ու իմաստությունը Ձեզ ամենքիդ՝ երկու եղբայր ժողովուրդների անկեղծ բարեկամության կերտման նվիրական ճանապարհին: